ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

N «ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-25/39»

ք. Երևան «25» «09» 2025 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարին փոխարինող Վ. Տեր-Բալյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Ջիջի» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ք. Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կազմակերպություն), մյուս կողմից, կնքեցին սույն Համագործակցության համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն Համաձայնագրով Կազմակերպությունը պարտավորվում է Պատվիրատուին տրամադրել ուղևորների օգտվելու սեփականության իրավունքով իրեն պատկանող և իր կողմից շահագործվող հավելվածի (այսուհետ՝ Հավելված) միջոցով իրականացվող էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայություններից: Հավելվածով առաջարկվող էլեկտրոնային հարթակի միջոցով ուղևորափոխադրման ծառայություններից օգտվելը վճարովի է:

1.2. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի իմաստով էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայությունը էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ համացանցի միջոցով, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ ուղևորների փոխադրման պատվերների ընդունման և փոխանցման ծառայությունների մատուցումն է:

1.3. Պատվիրատուն էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայությունների պատվերները կարող է ձևակերպել, եթե առկա է Հավելվածին կցված քարտ:

1.4. Կազմակերպությունը Հավելվածին կցված քարտի միջոցով ձևակերպված էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայությունների պատվերների համար տրամադրում է առցանց ՀԴՄ կտրոն, որի վրա, գնորդի բաժնում, նշվում է Պատվիրատուի ՀՎՀՀ-ն:

1.5. Կազմակերպությունը պարտավորվում է ապահովել Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելվածով սահմանված պահանջները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կազմակերպությունը պարտավորվում է չհրապարակել և/կամ չգովազդել Պատվիրատուի հետ համագործակցությունը, չօգտագործել Պատվիրատուի տարբերանշանն ու անվանումը իր հրապարակումներում և/կամ կայքերում առանց Պատվիրատուի համաձայնության:

2.2. Պատվիրատուն ընդունում է, որ Կազմակերպությունը չի հանդիսանում ուղևորափոխադրումներ, ինչպես նաև բեռնափոխադրումներ կամ առաքում իրականացնող անձ:

2.3. Կազմակերպությունը պատասխանատվություն չի կրում իրեն սեփականության իրավունքով պատկանող և իր կողմից շահագործվող Հավելվածի միջոցով Պատվիրատուի և երրորդ անձանց միջև ծագած հարաբերությունների կամ պարտավորությունների համար:

2.4. Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները Համաձայնագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար:

2.5. Համաձայնագրի ստորագրումից հետո Կազմակերպությունը Հավելվածում Պատվիրատուի կողմից հաստատված հեռախոսահամարի համար տրամադրում է կորպորատիվ օգտատիրոջ կարգավիճակ, ինչը հնարավորություն կտա նշված հաշվին կցել Պատվիրատուի այլ օգտատերերի:

2.6. Պատվիրատուն Կազմակերպությանն տրամադրում է օգտատերերի ցանկ Հավելվածում Պատվիրատուի օգտատերային հաշվին ավտոմատ կերպով կցելու նպատակով:

2.7. Կազմակերպությունը Պատվիրատուին հնարավորություն է ընձեռում www.business.team.gg կայքի միջոցով ստանալ վերջինիս կողմից ձևակերպված պատվերների վերաբերյալ հաշվետվությունները:

3. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

3.2. Համաձայնագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Համաձայնագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության 3 հետևանքով, որը ծագել է Համագործակցության համաձայնագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Համաձայնագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

6.2. Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Համաձայնագրի անբաժանելի մասը:

6.3. Համաձայնագրով չկարգավորված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

6.4. Համագործակցության համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի Հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մաս, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

6.5. Համաձայնագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Համաձայնագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության

Ք. Երևան, Կառավարական տուն 3

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Հ/Հ՝ 900011019321

ՀՎՀՀ՝ 01506515

Գլխավոր քարտուղարին փոխարինող՝

Վ. Տեր-Բալյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ջիջի» ՓԲԸ

ք.Երևան, Մամիկոնյանց 44/4

«Ինեկոբանկ» ՓԲԸ

ՀՀ 2050622055671001

ՀՎՀՀ 02259435

«Ջիջի» ՓԲԸ-ի տնօրեն՝

Ք. Գրիգորյան

Հավելված
«25» «09» 2025թ. կնքված
N «ԱՍՀՆ-ՄԱԾՁԲ-25/39» ծածկագրով Համաձայնագրի

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՎ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Էլեկտրոնային հարթակում ուղևորափոխադրման ծառայություններ մատուցող կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) մատուցում է էլեկտրոնային եղանակով, այդ թվում՝ համացանցի միջոցով, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ ուղևորների փոխադրման պատվերների ընդունման և փոխանցման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ):
2. Կազմակերպությունը պարտավոր է կազմել և ուղարկել կտրոն՝ էլեկտրոնային հարթակը օգտագործելով իրականացված յուրաքանչյուր ուղևորության համար, համաձայն գործող օրենսդրության:
3. Պատվիրատուին մատուցված ծառայությունների ընդհանուր արժեքը բաղկացած է հասանելիության տրամադրման էլեկտրոնային հարթակ - Կազմակերպության Ծառայությունների արժեքից, որը հաշվարկվում է Համաձայնագրի համաձայն և վարորդների ծառայությունների արժեքից, և որը սահմանվում է հավելվածում, Պատվիրատուի վարչական էջում, գործող սակագներին համապատասխան:
4. Կազմակերպությունը ամսական ոչ ուշ, քան հաշվետու ժամանակաշրջանի ավարտից սկսած ամսվա 6-րդ օրը, Պատվիրատուին էլեկտրոնային եղանակով ներկայացնում է հաշվետու ամսվա համար Մատուցված ծառայությունների ակտը, կից Հաշվետվությամբ (ըստ Պատվիրատուի պահանջի):
5. Կազմակերպության կողմից պատվերները ընդունվում են հետևյալ հարթակների միջոցով.
ա) բջջային հավելվածներ,
բ) ընկերության վեբկայքի միջոցով, որը տրամադրում է պատվերը տեղադրելու ֆունկցիոնալ հնարավորություն (կամ բաժին, որը պարունակում է տեղեկատվություն պատվիրատուի մասին),
գ) հեռախոսային օպերատորներ:
6. Ադմինիստրատիվ էջում արտացոլվում են Պատվիրատուի հեռախոսահամարներով տրված բոլոր պատվերների վիճակագրությունը (պատվերի ժամը, սկզբնական հասցեն, ավարտի հասցեն, պատվերի հեռավորությունը, տևողությունը, սպասելաժամանակը, կիրառված սակագինը, հավելավճարը)՝ պատվերի ավարտից անմիջապես հետո:
7. Պատվիրատուի կողմից վճարման ենթակա ծառայությունների ընդհանուր արժեքը հաշվարկվում է Համաձայնագրով, ինչպես նաև ձևավորված կտրոնների և գործող սակագների վերաբերյալ վիճակագրական տվյալների հիման վրա:
8. Պատվիրատուն կարող է կատարել նախնական երթերի ամրագրում: Կազմակերպությունը պարտավորվում է ծառայությունների մատուցման վերաբերյալ Պատվիրատուից բողոքներ ստանալու դեպքում, քննարկել այդպիսի բողոքները և օգնություն ցուցաբերել Պատվիրատուի/Հաճախորդի և Վարորդների միջև տարաձայնությունները լուծելու համար:
9. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է մյուս Կողմից Համաձայնագրով ստացված անձնական տվյալների գաղտնիությունը, անձնական տվյալների մշակման պահանջների համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:
10. Կազմակերպությունը պարտավորվում է ծառայությունների մատուցման վերաբերյալ Պատվիրատուից բողոքներ ստանալու դեպքում, քննարկել այդպիսի բողոքներն և օգնություն

ցուցաբերել Պատվիրատուի/Հաճախորդի և Վարորդների միջև տարաձայնությունները լուծելու համար:

11. Կազմակերպությունը պարտավոր է իր վերկայքում և բջջային հավելվածում հրապարակել օֆերտայով նախատեսված ծառայությունների՝

ա) մատուցման կարգը,

բ) բողոքարկման կարգը, թեժ գծի հեռախոսահամարները և էլեկտրոնային փոստի հասցեն,

գ) օգտվելու, վճարում կատարելու, հաշվետվությունների տրամադրման պայմանները,

դ) հաճախորդի և օգտվողի իրավունքները, պարտավորությունները և պարտականությունները,

ե) Կազմակերպության և աշխատակցի (վարորդի) իրավունքները, պարտավորությունները և պարտականությունները,

զ) աջակցման հեռախոսահամարը:

12. Ծառայության մատուցման հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարության
Ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011019321
ՀՎՀՀ՝ 01506515
Գլխավոր քարտուղարին փոխարինող՝
Վ. Տեր-Բալյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ջիջի» ՓԲԸ
ք.Երևան, Մամիկոնյանց 44/4
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050622055671001
ՀՎՀՀ 02259435
«Ջիջի» ՓԲԸ-ի
տնօրեն
Ք. Գրիգորյան